Ջորջ Օրուել

Կախաղան/Էսսե/

Բիրմայում էր, մի թաց, անձրևառատ առավոտ: Բանտի բարձր պատերի վրայից լույսի շեղ ճառագայթները, նման դեղին փայլաթիթեղի, ընկնում էին բանտի բակ: Մենք սպասում էինք դատապարտյալների խցերից դուրս, որ գոմի կենդանավանդակների նման շարված էին կողք կողքի՝ կրկնակի ճաղաշարքի հետևում: Խցերը տասը ֆուտը տասի վրա էին, համարյա դատարկ, եթե չհաշվենք փայտե մահճակալն ու ջրամանը: Դրանցից մի քանիսում թուխ տղամարդիկ, ծածկոցներով փաթաթված, լուռ պպզած էին ներքին ճաղաշարքի մոտ: Սրանք դատապարտյալներն էին, որոնց պիտի կաղաղան հանեին մեկ-երկու շաբաթվա ընթացքում: Բանտարկյալներից մեկին դուրս էին բերել իր խցից: Հինդու էր՝ մի թշվառ ու նվազ տղամարդ՝ սափրված գլխով և աղոտ, շաղված աչքերով: Խիտ ծլած բեղեր ուներ, որ անհեթեթորեն մեծ էին մարմնի համեմատ. իսկը կոմիկ դերասանի բեղմորուս: Թվով վեց բարձրահասակ հնդիկ բանտապահներ հսկում էին նրան ու պատրաստում կախաղանին: Նրանցից երկուսը կանգնել էին՝ սվինները հրացաններին ամրացրած: Այդ ընթացքում մյուսները ձեռնաշղթաներ հագցրին, մի շղթա էլ ձեռնաշղթաների միջով անցկացրին, կապեցին իրենց գոտիներին ու բանտարկյալի թևերն ամուր սեղմեցին կողերին: Հսկիչները խմբվել էին նրա շուրջբոլորը՝ զգույշ, մի տեսակ գգվալից սեղմմամբ. ասես ամբողջ ընթացքում շոշափելիս լինեին նրան՝ համոզվելու, որ այնտեղ է: Կասեիր՝ ձուկ է, որ դեռ կենդանի է ու կարող է հետ ցատկել ջուրը: Իսկ նա կանգնած էր առանց դիմադրության նշույլների՝ տկար թևերը հանձնած պարաններին. տպավորություն էր, թե չի նկատում՝ ինչ է կատարվում: Խփեց ժամը ութը, և խոնավ օդի մեջ լողալով՝ հեռավոր զորանոցից մեզ հասան փողի անմխիթար բարակ հնչյունները: Բանտապետը, որ մյուսներիցս անջատ կանգնած՝ մռայլ տեսքով ձեռնափայտով բզբզում էր խճաքարերը, ձայնից գլուխը բարձրացրեց: Նա զինվորական բժիշկ էր՝ մոխրագույն խոզանականման բեղերով ու կոպիտ ձայնով: «Ի սեր Աստծո, շո՛ւտ արա, Ֆրե՛նսիս,— ասաց նյարդայնացած:— Արդեն պիտի մեռած լիներ: Դեռ պատրա՞ստ չեք»:

Ֆրենսիսը՝ գլխավոր բանտապանը՝ սպիտակ կոստյումով ու ոսկի ակնոցով մի չաղ դրավիդացի, թափ տվեց սև ձեռքը։ «Հա սըր, հա սըր,— բլբլաց նա։— Սսաղ նորմալ պատրաստ է։ Դահիճը սսպասում է։ Գործի անցնենք»։
«Դե, շարժվեք, ուրեմն։ Մինչև էս գործից չպրծնենք, բանտարկյալները չեն կարող նախաճաշել»։

Ճամփա ընկանք դեպի կախաղանը։ Բանտարկյալի երկու կողքերից քայլում էր մեկական հսկիչ, ևս երկուսը քայլում էին նրան կիպ կպած՝ թևից ու ուսից բռնած. ասես միաժամանակ և՛ հրում էին նրան, և՛ պահում։ Մյուսներս՝ դատավորներն ու մնացածներս, հետևում էինք նրանց։ Հանկարծ, երբ տասը յարդ անցել էինք, երթը կանգ առավ առանց որևէ հրամանի կամ նախազգուշացման։ Սարսափելի բան էր կատարվել. մի շուն էր մտել բակ, աստված գիտի՝ որտեղից էր հայտնվել։ Հաչոցների բարձր համազարկով ու արագ ոստյուններով շունն անցավ մեր արանքով ու սկսեց ցատկոտել մեր շուրջը՝ մի տեղում այդքան մարդ տեսնելու ցնծությունից կատաղի ոգևորված։ Հսկայական բրդոտ շուտ էր՝ էյրդեյլի ու փողոցային շան խառնուրդ։ Մի պահ պտույտներ գործեց մեր շուրջը, իսկ հետո, նախքան կհասցնեին դեմն առնել, հանդգնեց ոստնել բանտարկյալի վրա ու վեր-վեր ցատկելով՝ փորձեց լպստել նրա դեմքը։ Բոլորը զարհուրած կանգնած մնացին՝ չափից դուրս ապշահար, որ գոնե բռնեին շանը։

«Ո՞վ է թողել՝ էդ արյունարբու գազանն էստեղ գա,— զայրացավ բանտապետը։— Բռնե՛ք դրան, մեկնումե՛կդ»։

Բանտապահներից մեկը, որ պահակախմբից առանձին էր, անփույթ նետվեց շան հետևից, բայց շունը ոստոստելով ու խայտալով հեռու գնաց՝ կարծելով, թե այդ ամենն էլ խաղի մաս է։ Եվրասիացի մի երիտասարդ բանտապան մի բուռ խիճ վերցրեց ու փորձեց քարերի հարվածներով քշել շանը, բայց շունը խույս տվեց ու նորից մեր հետևից եկավ։ Բանտի պատերից լսվում էր նրա կլանչոցի արձագանքը։ Բանտարկյալը, որին պինդ բռնել էին երկու բանտապանները, անտարբեր նայում էր. իբր դա էլ կախաղանի հերթական ձևական մասերից էր։ Մի քանի րոպե անցավ, մինչև ինչ-որ մեկին հաջողվեց բռնել շանը։ Հետո թաշկինակս կապեցինք նրա վզկապին ու նորից ճամփա ընկանք, մինչ շունը շարունակում էր ջղաձգվել ու կնճմնձալ։

Մոտ քառասուն յարդ էր մնացել մինչև կախաղանը։ Ես նայում էի առջևիցս քայլող

բանտարկյալի շագանակագույն մերկ մեջքին: Կապկպված թևերով քայլում էր անփույթ, բայց բավականին անշեղ՝ հնդիկի հաստատուն քայլքով՝ առանց ծնկներն ուղղելու: Ամեն քայլի հետ նրա մկանները սահում-ընկնում էին իրենց տեղը, գլխի մազափունջը վերուվար էր ծածանվում, ոտնահետքերը տպվում էին թաց խճի վրա: Մի անգամ էլ, չնայած երկու հոգով բռնել էին ուսերից, մի քիչ կողքի քաշվեց, որ խուսափի ճամփի ջրափոսից:

Հետաքրքիր է, բայց մինչև այդ պահը երբեք չէի գիտակցել՝ ինչ է նշանակում ոչնչացնել առողջ, գիտակից մարդուն: Երբ տեսա՝ ինչպես տղամարդը կողքի քաշվեց՝ ջրափոսից խուսափելու համար, ինձ համար բացահայտվեց ծաղկման մեջ գտնվող կյանքի թելը կտրելու առեղծվածը, դրա անասելի անարդարացիությունը: Այս մարդը չէր մահանում, նա նույնքան կենդանի էր, որքան մենք: Նրա մարմնի բոլոր օրգաններն աշխատում էին. աղիները մարսում էին սնունդը, մաշկն ինքնավերականգնվում էր, եղունգներն աճում էին, հյուսվածքները՝ ձևավորվում. բոլոր օրգանները ճգնում էին հանդիսավորությամբ, որն արդեն անհեթեթություն էր հիշեցնում: Նրա եղունգները դեռ կշարունակեն աճել, երբ կախաղան բարձրանալիս լինի, երբ օդը ճեղքելով ներքև ընկնի՝ մեկ տասնորդական վայրկյան ապրելու ժամանակով: Նրա աչքերը տեսնում էին դեղնագույն խիճն ու մոխրագույն պատերը, ուղեղը դեռ հիշում էր, կանխատեսում, տրամաբանում, նույնիսկ ջրափոսների մասին էր մտածում: Նա և մենք մի խումբ մարդիկ էինք, որ միասին քայլում էինք, տեսնում, լսում, զգում, հասկանում միևնույն աշխարհը, իսկ երկու րոպեից մատի մի հարվածով մեզնից մեկն այլևս չի լինի. մի միտք պակաս՝ մի աշխարհ պակաս:

Կախաղանը գտնվում էր մի փոքրիկ բակում, բանտի հիմնական տարածքից առանձնացված էր ու ծածկված փշաթաթակ մոլախոտերով: Աղյուսե շինվածք էր՝ նման եռապատ խորդանոցի: Տախտակե տանիքից վեր էին խոյանում երկու սյուներ ու խաչաձող, որից կախված ճոճվում էր պարանը: Դահիճը՝ բանտի սպիտակ համազգեստով սպիտակահեր մի դատապարտյալ, կանգնած էր իր մեխանիզմի կողքին: Երբ մտանք, ստրկական խոնարհումով ողջունեց մեզ: Ֆրենսիսի մի խոսքով երկու հսկիչները, որ հիմա առաջվանից էլ պինդ էին բռնել բանտարկյալին, նրան կիսահրելով, կիսաառաջնորդելով տարան դեպի կախաղանն ու անփութորեն օգնեցին բարձրանալ սանդուղքով: Հետո բարձրացավ դահիճն ու պարանն ամրացրեց բանտարկյալի վզին:

Մենք կանգնած սպասում էինք, հինգ յարդ այնկողմ: Բանտապանները կախաղանի շուրջը ծուռումուռ շրջան էին կազմել: Իսկ հետո, երբ օղակը տեղավորեցին, բանտարկյալը սկսեց աղաղակել ու դիմել իր աստծուն: Հնչեղ, կրկնվող ճիչ էր՝ «Ռա՛մ, Ռա՛մ, Ռա՛մ, Ռա՛մ». ոչ թե թախանձագին ու վախվորած աղոթք էր կամ օգնության կանչ, այլ հաստատուն, ռիթմիկ ձայն՝ մի քիչ զանգի ղողանջի նման: Շունը ձայնին վնգստոցով արձագանքեց: Դահիճը՝ դեռ կանգնած կախաղանի մոտ, ալյուրի պարկ հիշեցնող բամբակե փոքրիկ տոպրակն առավ ձեռքն ու քաշեց բանտարկյալի դեմքին: Կտորից խեղդված ձայնը, սակայն, չէր նահանջում. «Ռա՛մ, Ռա՛մ, Ռա՛մ, Ռա՛մ»: Դահիճն իջավ ու, լծակը ձեռքն առնելով, կազմ-պատրաստ կանգնեց: Թվաց՝ րոպեներ անցան: Բանտարկյալի անընդմեջ խուլ ճիչերը շարունակվում էին. «Ռա՛մ, Ռա՛մ, Ռա՛մ, Ռա՛մ»՝ առանց մի ակնթարթ դադարի: Բանտապետը, գլուխը կրծքին կախած, ձեռնափայտով դանդաղ փորփրում էր գետինը. գուցե հաշվում էր ճիչերը՝ թույլ տալով բանտարկյալին կոնկրետ թվի հասնել՝ հիսունի, գուցե հարյուրի: Բոլորի դեմքների գույնը փոխվել էր: Հնդիկները վատ սուրճի պես մոխրագույն էին դարձել, սվիններից մեկ-երկուսը երերում էին: Մենք նայում էինք հարթակին կանգնած մարդուն՝ խարազանված, պարկը գլխին հագցրած, ու լսում էինք նրա ճիչերը, յուրաքանչյուր ճիչը՝ կյանքի ևս մեկ վայրկյան: Բոլորիս գլխում նույն միտքն էր. դե շուտ սպանե՛ք նրան, վերջացրե՛ք, վե՛րջ տվեք էդ զազրելի աղմուկին: Բանտապետը վերջապես որոշում կայացրեց: Գլուխը վեր պարզելով՝ նա ձեռնափայտով արագ շարժում արեց: «Chalo[1]»,— բղավեց գրեթե կատաղի: Զրնգոցի նմանվող ձայն լսվեց, իսկ հետո՝ քար լռություն: Բանտարկյալն անհետացել էր, ու պարանն ասես ինքն իր շուրջը ոլորվելիս լիներ: Ես բաց թողեցի շանը, և շունն անմիջապես սլացավ դեպի կախաղանի հետևը, բայց, անտեղ հասնելով, կտրուկ կանգ առավ, հաչեց, իսկ հետո նահանջեց դեպի բակի մի անկյունը, որտեղ կանգնեց մոլախոտերի վրա՝ սարսափահար մեզ նայելով: Մենք շրջանցեցինք կախաղանը՝ զննելու բանտարկյալի մարմինը: Նա կախված էր՝ ոտքի մատները դեպի ներքև տնկված, դանդաղ ճոճվում էր. քարի պես անկենդան: Բանտապետը մոտեցավ ու ձեռնափայտով բզեց ողորմելի մարմինը. Մարմինը թեթևակի երերաց: «Ամեն ինչ կարգին է»,— ասաց բանտապետը: Նա հետ քաշվեց կախաղանի տակից ու խորը շունչ քաշեց: Դեմքի մոայլ արտահայտությունն անսպասելիորեն չքացել էր: Հայացք գցեց ձեռքի ժամացույցին: «Ութն անց ութ է: Էս

առավոտվա համար՝ էսքանը, փա՛ռք Աստծո»։ Հսկիչներն արձակեցին սվիններն ու հեռացան։ Շունը, սթափվելով ու գիտակցելով, որ իրեն վատ է պահել, դանդաղ հետևեց նրանց։ Մենք դուրս եկանք բակից, որտեղ կախաղանն էր, անցանք խցերի կողքով, որտեղ բանտարկյալներն էին սպասում, ու մտանք բանտի հսկայական կենտրոնական բակը։ Դատապարտյալներն արդեն նախաճաշում էին մահակներով զինված պահակների հսկողության տակ։ Երկար շարքերով պպզած էին, յուրաքանչյուրի ձեռքին թիթեղյա աման էր, իսկ երկու հսկիչներ դույլերով պտտվում ու բրինձ էին բաժանում. կախաղանից հետո շատ տնական, ուրախ տեսարան էր։ Հիմա, երբ գործն ավարտված էր, ահռելի թեթևություն էինք զգում։ Ուզում էինք երգել, վազել, խնդալ։ Միանգամից բոլորն սկսեցին ուրախ շաղակրատել։ Կողքովս քայլող եվրասիացի տղան գլխով ցույց տվեց ճանապարհը, որով եկել էինք, ու բազմիմաստ ժպիտով ասաց. «Գիտե՞ք, սը՛ր, էդ մեր ընկերը (նկատի ուներ մահացածին), երբ իմացավ՝ իր դիմումը մերժել են, հենց իր խցում տակն արեց։ Վախից։ Ծխախոտ վերցրեք, սը՛ր։ Հավանո՞ւմ եք իմ նոր արծաթե ծխախոտատուփը, սը՛ր։ Մի փողոցային առևտրականից եմ գնել. երկու ռուպի, ութ աննա։ Ընտիր բան է՝ եվրոպական ոճով»։

Մի քանիսը ծիծաղեցին. թե ինչի վրա՝ դժվար թե իմանային։ Ֆրենսիսը շատախոսելով քայլում էր բանտապետի կողքով։ «Դե ինչ, սըր, սսաղ ընտիր անցավ։ Չը՛խկ, ու սսաղ վերջացավ. հենց էդպես։ Միշտ էդպեսս չի լինում, չէ-չէ։ Դեպքեր գիտեմ, երբ բժիշկը սստիպված կախաղանի տակ է մտել ու քաշել կախվածի ոտքերը, որ համոզվի՝ մեռած է։ Տհաճ բան է»։

«Թպրտում էր, հա՞։ Հեչ լավ չի»,— ասաց բանտապետը։

«Ախ, սըր, ավելի վատ է լինում, երբ սսկսում են կամակորություն անել։ Մի մարդ, հիշում եմ, պոկ չէր գալիս սսեփական վանդակի ճաղերից, երբ գնացինք նրան դուրս հանելու։ Կարող եք չհավատալ, բայց նրան տեղից պոկելու համար վեց բանտապան պետք եղավ, ամեն ոտքից երեք հոգի քաշում էր։ Փորձեցինք նրան խելքի բերել. «Ընկեր ջան,— ասում ենք,— մտածիր՝ ինչ գլխացավանք ու անախորժություններ ես ստեղծում մեզ համար»։ Բայց չէ՛, չէր լսում։ Ախ, շատ նեղություն տվողն էր»։

Զգացի, որ բավականին բարձր ծիծաղում էի։ Բոլորն էին ծիծաղում։ Նույնիսկ բանտապետն էր մի տեսակ ներողամտորեն ծիծաղում։ «Եկեք, եկեք խմենք,— ասաց զվարթ ձայնով։— Մեքենայիս մեջ վիսկի ունեմ։ Մեզ չէր խանգարի»։

Անցանք բանտի հսկայական երկփեղկ դարպասներով ու դուրս եկանք ճանապարհի վրա։

«Ոտքերից քաշելո՛վ,— հանկարծ բացականչեց բիրմացի դատավորն ու բարձր քրքջաց։ Բոլորս նորից սկսեցինք ծիծաղել։ Այդ պահին Ֆրենսիսի պատմությունն անսովոր ծիծաղելի թվաց։ Խմեցինք բոլորս՝ տեղացի ու եվրոպացի, բոլորս՝ իրար նման, բարեկամաբար։ Մահացածը մեզնից հարյուր յարդ էր հեռու։

Թարգմանությունը անգլերենից՝ Լիլիթ Պետրոսյանի

[1] Chalo – հնդկերեն՝ «Գնացինք»։